

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2023Թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	7
3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ	10
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	13
5. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համաշխարհային տնտեսությունը փորձում է հնարավորինս վերականգնել համավարակի, ռուս-ուկրաինական և այլ հակամարտությունների, տարբեր աշխարհաքաղաքական ու տնտեսական պատճառներով մատակարարման շղթաների խաթարման, բոլոր երկրներում աննախադեպ զսպող դրամավարկային քաղաքականության և այլ պատճառներով կորսված դիրքերը: 2023 թվականի ինն ամիսների արդյունքներով ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճը գտնվել է դրական տիրույթում: Միջին հաշվով 2.8% աճ է արձանագրվել ՌԴ-ում, 5.2%՝ Չինաստանում, 2.3%՝ ԱՄՆ-ում և ընդամենը 0.6%՝ Եվրագոտում:

Ռուս-ուկրաինական հակամարտությունը շարունակում է դրականորեն ազդել ՀՀ տնտեսության վրա: Մասնավորապես, հակամարտության հետևանքով առաջացած արտածին դրական գործոնների, այդ թվում՝ մարդկանց և կապիտալի դեպի Հայաստան զգալի ներհոսքի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ինչպես նաև դեպի ՌԴ արտահանման ծավալների կտրուկ ավելացման շնորհիվ 2022 թվականին և 2023-ի առաջին կիսամյակում գրանցվեց տնտեսական ակտիվության երկնիշ աճ: **Սակայն արդեն 2023թ. հունիսից այն աստիճանաբար սկսեց դանդաղել, իսկ սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) հասավ ռեկորդային ցածր մակարդակի՝ ընդամենը 5.3%-ի:** Հունվար-սեպտեմբերին գրանցվել է տնտեսական ակտիվության 9.7% աճ, որն առավելապես պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների ոլորտների աճերով. դրանց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 9.1 և 3.1 տոկոսային կետ: Նշված ժամանակաշրջանում թողարկման աճ է գրանցվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ արդյունաբերության:

2023 թվականի հունվար-սեպտեմբերին *արդյունաբերության* ճյուղում արձանագրված 0.6% անկումը պայմանավորված է «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» (անկմանը նպաստումը՝ 0.9 տոկոսային կետ) և «մշակող արդյունաբերություն» (անկմանը նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ) ենթաճյուղերի նվազմամբ:

Մշակող արդյունաբերության նվազումը հիմնականում պայմանավորված է եղել հիմնային մետաղների (նպաստումը՝ 2.7 տոկոսային կետ) և սննդամթերքի արտադրության (նպաստումը՝ 1.7 տոկոսային կետ) նվազմամբ: Մշակող արդյունաբերության նվազման հիմնական գործոնը Սոթքի հանքի շահագործման

դադարեցումն է, իսկ սննդամթերքի արտադրության նվազումը պայմանավորված է արտաքին և ներքին շուկաներում իրացման ծավալների նվազմամբ: Մշակող արդյունաբերության նվազմանը հիմնականում հակազդել են ոսկերչական (նպաստումը՝ 1.7 տոկոսային կետ) և ծխախոտային արտադրատեսակների (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ) արտադրության, ինչպես նաև պոլիգրաֆիական գործունեության (նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ) աճերը:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը 2023 թվականի հունվար-սեպտեմբերին աճել է 1.6%-ով՝ հիմնականում պայմանավորված բուսաբուծության աճով (նպաստումը՝ 3.2 տոկոսային կետ): Միաժամանակ, անասնաբուծության նվազումը 1.6 տոկոսային կետով հակազդել է ճյուղի աճին:

Շինարարության ճյուղում գրանցված 17.0% աճը պայմանավորված է եղել հիմնականում կազմակերպությունների (նպաստումը՝ 18.2 տոկոսային կետ), ինչպես նաև համայնքների միջոցներով (նպաստումը՝ 2.9 տոկոսային կետ) իրականացված շինարարության ծավալների աճով: Կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճն առավելապես պայմանավորված է բնակարանային շինարարության ծավալների աճով, որում վճռորոշ է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների եկամտահարկից վերադարձման ծրագրի ազդեցությունը: Մինչդեռ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարության նվազումը հակազդել է շինարարության ընդհանուր աճին (3.7 տոկոսային կետ)՝ պայմանավորված ինչպես միջազգային վարկերով, այնպես էլ զուտ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարության ծավալների նվազմամբ:

Ծառայությունների ոլորտում աճը 13.4% է: Այն առավելապես պայմանավորված է «տեղեկատվություն և կապ» (նպաստումը՝ 8.4 տոկոսային կետ), «տրանսպորտ» (նպաստումը՝ 3.4 տոկոսային կետ) և «կացության և հանրային սննդի կազմակերպում» (նպաստումը՝ 1.9 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճերով: Ճյուղի աճին հակազդել է ֆինանսական և ապահովագրական գործունեության նվազումը (բացասական նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ):

Առևտրի 22.9% աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 18.1 տոկոսային կետ):

Արտաքին առևտրի ցուցանիշների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դանդաղել է, սակայն մնում է բարձր: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների աճը գնահատվում է 28.2%, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ցածր է 19.8 տոկոսային կետով, իսկ ներմուծմանը՝ 29.6%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 36.0%-ի դիմաց: Ներմուծման աճին զգալի դրական նպաստում է ունեցել ազգային արժույթի արժևորումը: **Դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման աճերը ևս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դանդաղել են:** Մասնավորապես, արտահանումն աճել է 44.8%-ով, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ցածր է 19.0 տոկոսային կետով և կազմել է 5,120.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծման աճը 46.4% է՝ 15.2 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին: Ներմուծումը կազմել է 8,488.1 մլն ԱՄՆ դոլար: 2023 թվականի ինն ամիսների ընթացքում ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա համեմատ խորացել է 48.9%-ով: **Հատկանշական է, որ և՛ արտահանման, և՛ ներմուծման աճի տեմպերի դանդաղումը նկատվում է ընթացիկ տարվա ապրիլ ամսից:**

2023 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում արձանագրվել է գործազրկության նվազում և աշխատավարձերի աճ: 2023 թվականի հունվար-սեպտեմբերին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 15.7%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է շուրջ 5.7%-ով: Վարձու աշխատողների թվի աճին հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերության, կացության և հանրային սննդի կազմակերպման, տեղեկատվական տեխնոլոգիաների, շինարարության, ինչպես նաև մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտներում աշխատողների թվի աճը: Այն իր հերթին հիմնականում պայմանավորված է ՀՀ ժամանած աշխատանքային միգրանտների թվի աճով, ինչպես նաև մշակող արդյունաբերության որոշ արտադրատեսակների նկատմամբ պահանջարկի աճով և շինարարության ոլորտի դրական զարգացումներով:

2023 թվականի հունվար-սեպտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 16.6%-ով՝ կազմելով 262,789 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 10.0%-ով՝ կազմելով 198,022 դրամ, իսկ ոչ պետականում՝ 17.9%-ով և կազմել է 289,245 դրամ:

2023-ի տարեսկզբի համեմատ գնաճը զգալիորեն դանդաղել է: Միջազգային շուկաներից փոխանցված գնանկումային ազդեցությունների և գնաճային սպասումների նվազման հաշվին 2023 թվականի ինն ամիսներին գրանցվել է ոչ բարձր միջին գնաճ՝ 2.8%: Այս հանգամանքը թույլ է տվել ԿԲ-ին զգալիորեն թուլացնել դրամավարկային պայմանները և 2023 թվականի ինն ամիսների ընթացքում քաղաքականության տոկոսադրույքը նվազեցնել 1.0 տոկոսային կետով՝ սեպտեմբերին սահմանելով այն 9.75%:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց փոխանցումները 2023 թվականի ինն ամիսներին շարունակում են մնալ բարձր մակարդակում, սակայն նախորդ տարվա ինն ամիսների ցուցանիշից զգալիորեն ցածր են: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով այլ երկրներից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակներով զուտ փոխանցումների ներհոսքը 2023 թվականի ինն ամիսների դրությամբ կազմել է 1,330.4 մլն դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին զիջում է 23.1%-ով:

Այսպիսով, ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով ի հայտ եկած դրական արտաժին գործոնների շնորհիվ նախորդ տարի և այս տարեսկզբին արձանագրված բարձր տնտեսական աճն աստիճանաբար դանդաղում է: Մասնավորապես, հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային ՏԱՑ-ը նվազել է մինչև 9.7% (ընդ որում, սեպտեմբեր ամսվա ՏԱՑ-ն ընդամենը 5.3% է), իսկ 2023-ի ամեն հաջորդ եռամսյակի տնտեսական աճի տեմպն էապես զիջում է նախորդ եռամսյակի ցուցանիշին. այսպես, առաջին եռամսյակում այն կազմել է 12.1%, երկրորդում՝ 9.1%, իսկ երրորդում՝ 7.4%: Այս դանդաղումը պետք է լրջորեն մտախոգի կառավարությանը, քանի որ նման պայմաններում նրանից ակնկալվում է առկա դրական զարգացումները պահպանելուն և փաստացի ու հնարավոր բացասական հետևանքները մեղմելուն միտված արդյունավետ միջոցառումների իրականացում: Նկատի ունենալով ներկայիս գլոբալ աշխարհաքաղաքական զարգացումների ծայրահեղ անկայուն բնույթը՝ չի կարելի բացառել արտաքին իրավիճակի այնպիսի կտրուկ փոփոխության հնարավորությունը, որը կարող է չեզոքացնել կամ էապես թուլացնել ՀՀ տնտեսության համար նպաստավոր արտաժին գործոնների ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ, պետք է հաշվի առնել, որ սեպտեմբեր ամսվա վերջի՝ Արցախի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի և դրան հաջորդած՝ արցախահայության բռնի տեղահանման ազդեցությունը հունվար-սեպտեմբեր

ամիսների տնտեսական զարգացումներում դեռևս չեն արտահայտվել, և տնտեսության վրա դրանց ազդեցությունը կզգացվի հետագա ամիսներին:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2023 թվականի առաջին ինն ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմում են 1,708.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է 13.8%-ով: **Ընդ որում, պետական բյուջեի եկամուտների՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճի տեմպը նվազել է:** Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2023թ. ինն ամիսների աճի տեմպը 4.3 տոկոսային կետով պակաս է առաջին կիսամյակի նույն ցուցանիշից:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.			
	Ինն ամիսների փաստացի	Ինն ամիսների պլան	Ինն ամիսների ճշտված պլան	Ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	1,500.8	1,660.7	1,683.2	1,708.5	101.5
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,405.8	1,597.0	1,618.0	1,617.1	99.9
Պաշտոնական դրամաշնորհներ	12.6	12.1	13.0	5.9	45.2
Այլ եկամուտներ	82.4	51.6	52.2	85.6	163.9

Բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. ինն ամիսների ճշտված պլանի ցուցանիշից ավելի են 25.3 մլրդ դրամով կամ 1.5%-ով, իսկ հարկային եկամուտները 0.9 մլրդ դրամով գիջում են պլանային ցուցանիշին: Հարկային եկամուտների նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը նույնպես դանդաղել է: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2023թ. ինն ամիսների աճի տեմպը 3.9 տոկոսային կետով պակաս է առաջին կիսամյակի նույն ցուցանիշից:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2022թ. ինն ամիսների փաստացի (մլրդ. դրամ)	2023թ. ինն ամիսների փաստացի (մլրդ. դրամ)	2023թ. ինն ամիսները 2022թ. ինն ամիսների նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,405.8	1,617.1	115.0
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	1,315.0	1,569.8	119.4
ԱԱՀ	468.1	538.4	115.0
Ակցիզային հարկ	85.1	95.7	112.4
Շահութահարկ	192.5	276.5	143.6
Մաքսատուրք	34.5	54.8	158.8
Եկամտային հարկ	348.5	404.8	116.1
Շրջանառության հարկ	29.0	37.6	129.8
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	46.6	66.7	143.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	71.5	42.0	58.8
Այլ հարկեր	39.2	53.2	135.5
2. Պետական տուրք	90.7	47.3	52.1

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծությունը 1,617.1 մլրդ. դրամ է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 15.0%-ով ավելի: Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության աճին առավելապես նպաստել են շահութահարկը (աճը՝ 43.6%, նպաստումը հարկային եկամուտների աճին՝ 6.0 տոկոսային կետ), ավելացված արժեքի հարկը (աճը՝ 15.0%, նպաստումը՝ 5.0 տոկոսային կետ) և եկամտային հարկը (աճը՝ 16.1%, նպաստումը՝ 4.0 տոկոսային կետ): «Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար» և «պետական տուրք» եկամտատեսակների գծով նվազում է արձանագրվել՝ համապատասխանաբար 41.2% և 47.9%: Այդ նվազումները հակադրել են ընդհանուր մեծության աճին՝ համապատասխանաբար 2.1 և 3.1 տոկոսային կետով:

Պաշտոնական դրամաշնորհների ստացման մասով պլանի թերակատարման «տխուր ավանդույթը» շարունակվում է: Ճշտված պլանով նախատեսված 13.0 մլրդ. դրամի փոխարեն ստացվել է 5.9 մլրդ. դրամ: Հաշվետվությունում ևս նշվում է, որ դրամաշնորհների գծով ծրագրված մուտքերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի ցածր կատարողականով, իսկ դա վկայում է այն մասին, որ կառավարությունը կա՛մ չի կատարել դրանց ստացման

համար անհրաժեշտ նախապայմանները կա՛մ թերակատարվել են սահմանված աշխատանքները: Նպատակային ծրագրերից 8-ի՝ 4.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով դրամաշնորհներն ընդհանրապես չեն ստացվել, իսկ 11 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են մասնակիորեն՝ ապահովելով 65% կատարողական (5.6 մլրդ դրամ):

Բյուջեի այլ եկամուտները՝ 85.6 մլրդ դրամ, ճշտված պլանի ցուցանիշից 63.9%-ով (33.4 մլրդ դրամով) ավելի են՝ հիմնականում պայմանավորված բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարների, իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի և ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների՝ ծրագրային ցուցանիշների համեմատ գերակատարմամբ:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2023 թվականի առաջին ինն ամիսներին պետական բյուջեի ծախսերը ճշտված պլանի համեմատ թերակատարվել են 15.4%-ով կամ 297.7 մլրդ դրամով: Չնայած այն հանգամանքին, որ դրանց մեծությունը՝ 1,633.9 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է 12.7%-ով կամ 184.6 մլրդ դրամով, **հատկանշական է, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարման ծավալները 2023-ի առաջին ինն ամիսներին (ինչպես և 2022-ի ինն ամիսներին) ավելացել են (2022-ի առաջին ինն ամիսներին բյուջեի ծախսերը ճշտված պլանի համեմատ թերակատարվել էին 223.8 մլրդ դրամով, իսկ 2021-ի նույն ժամանակահատվածում՝ 154.5 մլրդ դրամով):**

Թերակատարվել են ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերը: Սակայն էապես ավելի մեծ է կապիտալ ծախսերի թերակատարումը. եթե ճշտված պլանի համեմատ ընթացիկ ծախսերը թերակատարվել են 8.8%-ով, ապա կապիտալ ծախսերի թերակատարումը 42.6% է:

Ընդհանրապես, պետք է նշել, որ բյուջեի թերակատարման պատճառներից մեկն այն է, որ հաճախ բյուջեով պլանավորված ցուցանիշներն ակնհայտորեն անիրատեսական (կամ կատարման առումով չափազանց դժվար իրականանալի) են: Ավելին, հետագայում, ճշտված պլանով ցուցանիշի պլանային մեծությունը բարձրացվում է, սակայն այն ոչ միայն թերակատարվում է, այլև շատ հաճախ փաստացի մեծությունը փոքր է լինում նույնիսկ նախնական պլանավորված

մեծությունից: **Տարիներ ի վեր «գործելաոճ» դարձած այս միտումը 2023 թվականի պետական բյուջեի դեպքում ևս շարունակվել է:** Այսպես, օրինակ՝ «2023թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ի սկզբանե պլանավորվել էր, որ 2023-ի առաջին ինն ամիսներին պետական բյուջեի ընդհանուր ծախսերը կազմելու են 1,856.9 մլրդ դրամ, ընթացիկ ծախսերը՝ 1,475.1 մլրդ դրամ, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը)՝ 387.9 մլրդ դրամ: Այնուհետև ճշտված պլանով դրանք բոլորը բարձրացվել են՝ համապատասխանաբար 1,931.6 մլրդ դրամ, 1,537.2 մլրդ դրամ և 414.8 մլրդ դրամ, մինչդեռ փաստացի ծախսերը՝ համապատասխանաբար 1,633.9 մլրդ դրամ, 1,401.7 մլրդ դրամ և 238.2 մլրդ դրամ, պակաս են նույնիսկ նախնական պլանավորված մեծություններից: Սա կարող է ընկալվել որպես լուրջ ահազանգ այն մասին, որ, ըստ ամենայնի, **պետական կառավարման համակարգը խիստ թերանում է ծախսերի պլանավորման առումով:**

Ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, այս տարի ևս առաջին ինն ամիսների ընթացիկ ծախսերի քուլոր բաղադրիչները ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են: Առավել էականներից է «Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» հոդվածով արձանագրված թերակատարումը՝ 15.8% կամ 23.3 մլրդ դրամ: Շոշափելի է նաև դրամաշնորհների գծով արձանագրված թերակատարումը՝ 12.2% կամ 26.4 մլրդ դրամ: Ընդ որում, այս թերակատարումը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է պետական հատվածի այլ մակարդակներին տրվող ընթացիկ և կապիտալ դրամաշնորհների ցածր կատարողականով:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,449.3	1,856.9	1,931.6	1,633.9	84.6
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	1,275.5	1,475.1	1,537.2	1,401.7	91.2
Աշխատանքի վարձատրություն	130.1	148.9	153.0	147.5	96.4
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	123.5	145.3	147.2	123.9	84.2

Տոկոսավճարներ	132.2	172.7	172.5	159.2	92.3
Սուբսիդիաներ	112.4	116.5	118.6	105.3	88.8
Դրամաշնորհներ	158.5	171.0	215.4	189.0	87.8
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	446.9	506.7	516.6	501.7	97.1
Այլ ծախսեր	172.0	214.0	214.0	175.1	81.8
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	173.9	393.9	394.4	232.3	58.9
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր), այդ թվում՝	179.0	387.9	414.8	238.2	57.4
Շենքեր և շինություններ	150.5	346.8	374.0	215.2	57.6
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	25.6	32.7	32.3	19.3	59.7
Այլ հիմնական միջոցներ	2.9	8.3	8.5	3.7	43.3
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	-5.1	-6.1	-20.3	-5.9	29.0

Հատկապես մտահոգիչ է կապիտալ ծախսերի թերակատարումը: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների¹ գծով թերակատարումը 2023թ. առաջին ինն ամիսներին կազմել է 41.1%՝ 162.1 մլրդ դրամ, իսկ կոնկրետ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերինը (կապիտալ ծախսերինը)՝ 42.6%՝ 176.6 մլրդ դրամ:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցածր ցուցանիշը պայմանավորված է կապիտալ ծախսերի կատարողականով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերի, ինչպես նաև Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի և պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծախսերի կատարողականով:

¹ Կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի տարբերությունը:

Մասնավորապես, ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերի գծով կապիտալ ծախսերի թերակատարումը կազմել է 89.5 մլրդ դրամ կամ 39.5%: Մնացած ծրագրերի գծով, ընդհանուր առմամբ, թերակատարումը 40.9% է՝ 45.2 մլրդ դրամ:

Կապիտալ ծախսերի թերակատարումը մտահոգիչ է. կատարելով այդ ծախսերը՝ պետությունը նպաստում է տնտեսության զարգացմանը: Մինչդեռ դրանց թերակատարումը (կամ թեկուզ ուշացումը) զրոյացնում կամ լավագույն դեպքում՝ հետաձգում, իսկ առավել հաճախ՝ ժամանակավրեպ է դարձնում դրանց կատարման դիմաց ակնկալվող արդյունքների ստացումը: Ներքին պահանջարկի ներկայիս աճի պայմաններում կառավարության առաջնային խնդիրներից մեկը պետք է լինի առաջարկի ավելացմանն ուղղված քայլերի իրականացումը, ինչը, անկասկած, առաջին հերթին ենթադրում է լուրջ նպատակային ծրագրերի մշակում և դրանց իրականացման շրջանակներում մեծածավալ կապիտալ ծախսերի կատարում:

Այս պարագայում առնվազն տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ չնայած կապիտալ ծախսերի տարիներ շարունակ արձանագրվող թերակատարմանը, որպես 2024թ. բյուջեի նախագծի կարևոր արժանիք դարձյալ իշխանության կողմից նշվում է աննախադեպ ծավալի կապիտալ ծախսերի պլանավորումը (բյուջեով նախատեսվում է, որ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 2024 թվականին 2023-ի համեմատ աճելու են շուրջ 30 տոկոսով՝ 162 մլրդ դրամով):

Ավելին, կապիտալ ծախսերի տարիներ շարունակ արձանագրվող «քրոնիկ» թերակատարումը հիմնավոր է դարձնում նաև այն մտավախությունը, որ ծախսերի պլանավորումից բացի պետական կառավարման համակարգը թերանում է նաև տնտեսության համար առանցքային նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման առումով:

Հարկ է նշել, որ ճշտված պլանի ցուցանիշից անհամեմատ փոքր են նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից փաստացի մուտքերը՝ նախատեսված 20.3 մլրդ դրամի փոխարեն 5.9 մլրդ դրամ կամ 71.0%-ով պակաս:

3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ

2023 թվականի պետական բյուջեով ինն ամիսների ընթացքում նախատեսվում էր իրականացնել 169 ծրագիր: Կատարված ճշտումների արդյունքում կառավարության կողմից դրանց թիվը հասցվել է 174-ի: Ինն ամիսներին փաստացի միջոցներ են օգտագործվել դրանցից 168-ի գծով: Ընդ որում, կառավարության

պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները վերաբաշխվել են: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 993 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 4 միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 888-ը կամ 89.4%-ը:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի՝ ծրագրված ցուցանիշից շեղումը կազմել է 297.7 մլրդ դրամ, որը հիմնականում արձանագրվել է ՀՀ պաշտպանության (118.2 մլրդ դրամ), ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (46.4 մլրդ դրամ), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (38.0 մլրդ դրամ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (15.6 մլրդ դրամ), ՀՀ ֆինանսների (14.6 մլրդ դրամ), ՀՀ էկոնոմիկայի (12.0 մլրդ դրամ) և ՀՀ առողջապահության (11.4 մլրդ դրամ) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

Պետք է նշել, որ պետական բյուջեի կատարման հաշվետվության աղյուսակում առանձին տողով ներկայացված բոլոր պատասխանատու մարմինների ծրագրերի գծով արձանագրվել են թերակատարումներ:

Կատարողականի հաշվետվությունում հիշատակված պատասխանատու մարմիններից ամենամեծ թերակատարումն արձանագրվել է պաշտպանության, էկոնոմիկայի և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով՝ համապատասխանաբար 28.2%, 23.5% և 23.3%:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացված «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի գծով արձանագրվել է դրամական արտահայտությամբ ամենամեծ թերակատարումը՝ 116.1 մլրդ դրամ (28.0%): Նկատի ունենալով ներկայիս անվտանգային լուրջ մարտահրավերները՝ այս հանգամանքը հատկապես մտահոգիչ է, քանի որ ստացվում է, որ բյուջեով պաշտպանության նպատակով գումար հատկացվել է, սակայն նախատեսված աշխատանքները չեն կատարվել:

ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվել է ևս չորս ծրագիր, որոնց ընդհանուր թերակատարումը կազմել է 50.1% կամ 2.1 մլրդ դրամ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ 2023 թվականի ինն ամիսների ընթացքում կատարվել է 11 ծրագիր: Դրանցից.

- «Ներդրումների և արտահանման խթանման» ծրագրի գծով թերակատարումը 86.4% կամ 4.4 մլրդ դրամ է:
- «Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն» ծրագրի գծով թերակատարումը 33.5% կամ 2.7 մլրդ դրամ է:
- «Զբոսաշրջության զարգացման» ծրագիրը թերակատարվել է 25.1%-ով կամ 1.3 մլրդ դրամով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

պատասխանատվությամբ 2023 թվականի ինն ամիսների ընթացքում կատարվել է 21 ծրագիր, որոնց վրա ընդհանուր առմամբ փաստացի ծախսվել է 152.6 մլրդ դրամ:

- «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրով թերակատարումը կազմում է 38.2% կամ 28.9 մլրդ դրամ: Ընդ որում, Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների ընդամենը 30.4%-ը՝ 6.8 մլրդ դրամ:
- «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիրը թերակատարվել է 45.0%-ով՝ 10.4 մլրդ դրամով:
- «Քաղաքային զարգացում» ծրագրի շրջանակներում թերակատարումը 46.2% կամ 7.7 մլրդ դրամ է:
- «Զրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագիրը թերակատարվել է 43.4%-ով կամ 3.6 մլրդ դրամով:

Ի դեպ, հարկ է նշել նաև, որ **ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության** պատասխանատվությամբ 2023 թվականի ինն ամիսների ընթացքում կատարվել է պետական բյուջեի 4 ծրագիր: Փաստացի կատարված ծախսերը կազմել են շուրջ 17.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 81.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ» և «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացում» ծրագրերի կատարողականով՝ համապատասխանաբար 85.7% կամ 0.9 մլրդ դրամ և 12.9% կամ 2.3 մլրդ դրամ:

Հիշատակման արժանի են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացված երկու ծրագրերի գծով թերակատարումները.

- «Ապահով դպրոց» ծրագրի գծով թերակատարումը 69.7% կամ 7.4 մլրդ դրամ է:
- 34.7% կամ 7.2 մլրդ դրամ է կազմում «Գիտական և գիտափորձնական հետազոտություններ» ծրագրի գծով թերակատարումը:

Այն փաստը, որ 2023թ. ինն ամիսներին պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված բոլոր պատասխանատու մարմինների ծրագրերի գծով արձանագրվել են թերակատարումներ, նշանակում է, որ չնայած բյուջեով այդ ծրագրերի համար գումար է նախատեսվում և հատկացվում, միևնույն է, դրանք ամբողջությամբ կամ մասնակիորեն չեն իրականացվում: Իսկ դա վկայում է պետական կառավարման ոչ բավարար մակարդակի և պետական մարմինների անարդյունավետ աշխատանքի մասին:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 74.6 մլրդ դրամ հավելուրդով՝ ճշտված պլանով նախատեսված 248.4 մլրդ դրամ պակասուրդի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 51.4 մլրդ դրամ հավելուրդի դիմաց: **Այսինքն՝ բյուջեի կատարումը ճշտված պլանից շեղվել է 323.0 մլրդ դրամով: Հավելուրդի ձևավորման հիմնական պատճառը բյուջետային ծախսերի թերակատարումն է:** Ըստ էության՝ ստացվում է, որ քանի որ կառավարությունը մի կողմից տնտեսությունից հավաքագրել է հարկերը, մյուս կողմից, սակայն, դրան համարժեք ծախսեր չի կատարել, փաստացի զսպել է տնտեսական ակտիվությունը: Ի դեպ, ցածր ցուցանիշ է արձանագրվել նաև արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով, որոնք կազմել են 68.0 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրված ցուցանիշի 51.0%-ը: Արդյունքում **հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա 2023 թվականի ինն ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է թույլ զսպող ազդեցություն:** Մինչդեռ 2023թ. պետական բյուջեի ուղերձով նախատեսվում էր, որ վարվելու է չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն²:

Քանի որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի թերակատարումը 54.5%-ով պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ, դժվար է ենթադրել, որ կառավարությունը զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը

² ՀՀ կառավարության 2023 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 49, 70, 76, 81, [https://minfin.am/website/images/website/2.Uxerdz_bacatragir%20\(1\).docx](https://minfin.am/website/images/website/2.Uxerdz_bacatragir%20(1).docx)

գիտակցաբար է իրականացրել կապիտալ ծախսերի հաշվին (դրանց թերակատարման միջոցով):

Չնայած բյուջեի հավելուրդին՝ ՀՀ կառավարությունը 2023-ի բոլոր ամիսներին ավելացրել է ներքին պարտքը: Ներքին փոխառու զուտ միջոցների ծավալը կազմել է 284.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 65.4%-ով ավելի:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	-51.4	196.2	248.4	-74.6	-30.0
<u>Պակասուրդի ֆինանսավորումը՝</u>					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	85.8	250.7	476.1	152.6	32.1
1. Փոխառու զուտ միջոցներ	172.1	243.0	284.0	284.8	100.3
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-86.3	7.7	192.1	-132.2	-68.8
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	-137.3	-54.5	-227.6	-227.2	99.8
1. Փոխառու զուտ միջոցներ	-10.6	45.8	-82.1	-86.8	105.7
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-126.7	-100.3	-145.6	-140.4	96.4

2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 11,322.3 մլն ԱՄՆ դոլար, որը 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից ավելի է 684.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 6.4%-ով: Կառավարության պարտքը կազմել է 10,790.4 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 704.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 7.0%-ով՝ **հիմնականում դրամային պարտքի հաշվին**, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը նվազել է 19.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 3.5%-ով: Կառավարության պարտքի աճն առավելապես պայմանավորված է ներքին պարտքի 14.7%-ով կամ 614.4 մլն ԱՄՆ դոլարով աճով: Արտաքին պարտքի աճը

կազմել է 1.5% կամ 89.6 մլն ԱՄՆ դոլար: Ներքին պարտքի կշիռը կառավարության պարտքի պորտֆելում նախորդ տարեվերջի համեմատ աճել է 3.0 տոկոսային կետով՝ սեպտեմբերի վերջի դրությամբ կազմելով 44.5%:

Աղյուսակ 5. ՀՀ պետական պարտքը

	Առ 31.12.2022թ.	Առ 30.09.2023թ.	Փոփո- խություն (%)	Տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքում, առ 30.09.2023թ. (%)
(մլրդ դրամ)				
ՀՀ պետական պարտք	4,186.7	4,454.2	6.4	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	3,969.7	4,244.9	6.9	95.3
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	2,319.7	2,354.0	1.5	52.8
- ՀՀ կառավարության ներքին պարտք	1,650.0	1,890.9	14.6	42.5
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	217.0	209.3	(-3.6)	4.7
(մլն ԱՄՆ դոլար)				
ՀՀ պետական պարտք	10,637.7	11,322.3	6.4	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	10,086.4	10,790.4	7.0	95.3
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	5,894.1	5,983.7	1.5	52.8
- ՀՀ կառավարության ներքին պարտք	4,192.3	4,806.7	14.7	42.5
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	551.3	531.9	(-3.5)	4.7

Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը 2023թ. սեպտեմբեր ամսին նախորդ տարեվերջի համեմատ նվազել է, սակայն դեռևս բարձր է: 2023 թվականի ինն ամիսների արդյունքներով ՀՀ պետական պարտատոմսերի տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշներից բարձր են: Եթե 2022 թվականի հունվար-սեպտեմբերին տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել էր 10.9%, ապա 2023 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 11.4%: Այնուամենայնիվ, 2023թ. 3-րդ եռամսյակում նկատելի են տոկոսադրույքների նվազման միտումներ՝ ամենայն հավանականությամբ պայմանավորված ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի նվազեցմամբ: Մասնավորապես, 2023թ. սեպտեմբերին առաջնային շուկայում տեղաբաշխված պետական կարճաժամկետ

պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ տարեվերջի համեմատ նվազել է 1.3 տոկոսային կետով՝ մինչև 10.3%, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ շուրջ 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 10.55%:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արձանագրենք.

- **Ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով ի հայտ եկած դրական արտաժին գործոնների շնորհիվ նախորդ տարի և այս տարեսկզբին արձանագրված բարձր տնտեսական աճն աստիճանաբար դանդաղում է:** Այս հանգամանքը պետք է լրջորեն մտահոգի կառավարությանը, քանի որ, նկատի ունենալով ներկայիս շեշտակիորեն փոփոխվող աշխարհաքաղաքական զարգացումները, չպետք է բացառել արտաքին իրավիճակի փոփոխության այնպիսի սցենարների հնարավորությունը, որոնք կարող են չեզոքացնել կամ էապես թուլացնել ՀՀ տնտեսության համար այդ նպաստավոր արտաժին գործոնների ազդեցությունը: **Այս պայմաններում կառավարությունից ակնկալվում են առկա դրական զարգացումները պահպանելուն և փաստացի ու հնարավոր բացասական հետևանքները մեղմելուն ուղղված գործուն քայլեր:** Առավել ևս, եթե հաշվի առնենք, որ 2024 թվականի պետական բյուջեի նախագծով 2024 թվականի համար կառավարությունը թիրախավորել է բավական բարձր՝ առնվազն 7% տնտեսական աճի ապահովումը:

- **2023թ. ինն ամիսների կտրվածքով բյուջեի կատարումը ճշտված պլանից շեղվել է 323.0 մլրդ դրամով:** Հունվար-սեպտեմբեր ամիսներին բյուջեն փաստացի ունեցել է 74.6 մլրդ դրամ հավելուրդ, այնինչ ճշտված պլանով ծրագրված էր ունենալ 248.4 մլրդ դրամ պակասուրդ: Քանի որ կառավարությունը մի կողմից տնտեսությունից հավաքագրել է հարկերը, մյուս կողմից, սակայն, պլանավորված չափով ծախսերը չի կատարել՝ զսպվել է տնտեսական ակտիվությունը:

- **Պետական բյուջեի ծախսերը ճշտված պլանի համեմատ թերակատարվել են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերի մասով:** Թերակատարումն անհամեմատ ավելի զգալի է եղել կապիտալ ծախսերի մասով. այսպես, եթե ճշտված պլանի համեմատ ընթացիկ ծախսերը թերակատարվել են 8.8%-ով, ապա կապիտալ ծախսերի թերակատարումը 42.6% է: Կապիտալ ծախսերի թերակատարումը մտահոգիչ է. կատարելով դրանք՝ պետությունն անուղղակիորեն նպաստում է տնտեսական ներուժի աճին, իսկ դրանց թերակատարումը (կամ թեկուզ ուշացումը)

չեզոքացնում է կամ լավագույն դեպքում՝ հետաձգում, երբեմն նույնիսկ ժամանակավորեպ դարձնում դրանց կատարումից ակնկալվող դրական արդյունքների ստացումը:

- **Թերակատարումները հասել են մտահոգիչ ծավալների:** Պետական բյուջեի կատարման հաշվետվության աղյուսակներում առանձին տողով ներկայացված են այն պատասխանատու մարմինների ծրագրերը, որոնք ծախսերի բացարձակ մեծության առումով առավել էական են: **Այդ բոլոր պատասխանատու մարմինների ծրագրերը թերակատարվել են:** Փաստորեն, ստացվում է, որ չնայած տվյալ ուղղության համար բյուջեով գումար է նախատեսված և հատկացված, սակայն, միևնույն է, ծրագրերն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեն իրականացվում:
- **Բացարձակ մեծությամբ ամենամեծ թերակատարումն արձանագրվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի գծով՝ 116.1 մլրդ դրամ:** Նկատի ունենալով ներկայիս անվտանգային լուրջ մարտահրավերները՝ այս հանգամանքը հատկապես մտահոգիչ է, քանի որ ստացվում է, որ բյուջեով պաշտպանության նպատակով համեմատաբար մեծ գումար է նախատեսվել, սակայն նախատեսված աշխատանքները չեն կատարվել: **Մինչդեռ, 2023 թվականի բյուջեն ներկայացնելիս, որպես նախորդ տարիների բյուջեների նկատմամբ դրա կարևոր առավելություն, գործող իշխանությունը շեշտում էր հենց պաշտպանության գծով կապիտալ ծախսերի համար մեծ գումարների հատկացումը:**
- **Պետական կառավարման համակարգում առկա են լուրջ խնդիրներ ծախսերի պլանավորման և ծրագրերի արդյունավետ իրականացման առումով:** Շատ հաճախ բյուջեի թերակատարման պատճառը պարզապես այն է, որ դրանում պլանավորվում են ակնհայտորեն անիրատեսական ցուցանիշներ: Բացի այդ, կապիտալ ծախսերի տարիներ շարունակ արձանագրվող «քրոնիկ» թերակատարումը վկայում է այն մասին, որ պետական կառավարման մարմինները չեն կարողանում ապահովել ծրագրերի արդյունավետ իրականացումը: **Իսկ դա խոսում է պետական կառավարման ոչ բավարար մակարդակի և պետական մարմինների անարդյունավետ աշխատանքի մասին:**

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: